ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն**

**ԳԱՎԱՌ 2023**

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից 2023թ. մայիսի 18-ին:

**Որակի ապահովման բաժնի պատասխանատուներ՝** Հայրապետյան Ք., Նախրատյան Մ., Մուրադյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Հարցման ընդհանուր նկարագիրը ............................................................4
II. Հարցման մեթոդաբանությունը ..................................................................4
III. Մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատում.......................5
IV. Եզրակացություններ և առաջարկություններ ................................................17

## I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածությունը գնահատելու, վերլուծություն իրականացնելու, ուսման որակը բարելավելու նպատակով Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) որակի ապահովման բաժնի կողմից առկա և հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատում սովորող ուսանողների շրջանում իրականացվել է հարցում նախապես մշակված առցանց (online) անանուն հարցաթերթիկի միջոցով:

Հարցման նպատակն է՝ բացահայտել առկա խնդիրները, ուսումնասիրել, վերլուծել, գնահատել ուսանողների կարծիքները, նկատառումները, առաջարկությունները, դժգոհությունները, դրանց հաշվառմամբ՝ ներկայացնել առաջարկություններ և ձեռնարկել միջոցներ՝ մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման որակն ու արդյունավետությունը բարձրացնելու, հիմնական շահառուների բավարարվածության աճին նպաստելու համար:

## II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց և ինտերվալային հարցերից: Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են որակի ապահովման բաժնի աշխատակիցների և ԳՊՀ դասախոսների, ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է որակական և քանակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը՝ միտված ԳՊՀ-ում կրթության որակի բարձրացմանը և ներքին շահակիցների բավարարվածության աճին:

## III. Մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից Գավառի պետական համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատում

ԳՊՀ 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման համակարգերում պրակտիկայում գտնվող 185 ուսանողից հարցմանը մասնակցել է 95-ը (51%): Պրակտիկայում գտնվող

**1. Ընդհանուր տեղեկություններ.**

Հարցմանը մասնակցած ուսանողների թվաքանակն՝ ըստ ֆակուլտետների և մասնագիտությունների.

| **Ֆակուլտետը, բաժինը** | **Պրակտիկայում գտնվող ուսանողների ընդհանուր թիվը** | **Հարցմանը մասնակիցների թիվը** | **Հարցմանը մասնակիցների տոկոսային հարաբերությունը** |
|---|---|---|---|
| **Բանասիրական** | **28** | **15** | **46%** |
| Հայոց լեզու և գրականություն 3-րդ կուրս | 7 | 4 | 57% |
| Հայոց լեզու և գրականություն 4-րդ կուրս | 4 | 3 | 75% |
| Անգլերեն լեզու և գրականություն 3-րդ կուրս | 9 | 4 | 44% |
| Անգլերեն լեզու և գրականություն 4-րդ կուրս | 8 | 4 | 50% |
| **Բնագիտական** | **40** | **19** | **47%** |
| Սերվիս 1-ին | 5 | 2 | 40% |
| Սերվիս 2-րդ | 2 | - | 0% |
| Սերվիս 3-րդ | 6 | 3 | 50% |
| Սերվիս 4-րդ | 4 | 2 | 50% |
| Համակարգչային ճարտարագիտություն 3-րդ կուրս | 7 | 3 | 42% |
| Համակարգչային ճարտարագիտություն 4-րդ կուրս | 3 | 1 | 33% |

| | | | |
|---|---|---|---|
| Քարտեզագրություն և կադաստրային գործ 1-ին կուրս | 1 | - | 0 % |
| Քարտեզագրություն և կադաստրային գործ 2-րդ կուրս | 2 | 1 | 50% |
| Դեղագործական քիմիա 2-րդ կուրս | 4 | 2 | 50% |
| Դեղագործական քիմիա 3-րդ կուրս | 4 | 3 | 75% |
| Դեղագործական քիմիա 4-րդ կուրս | 2 | 2 | 100% |
| **Հումանիտար մասնագիտությունների** | **22** | **20** | **90%** |
| Իրավագիտություն 4-րդ կուրս | 4 | 4 | 100% |
| Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 2-րդ կուրս | 7 | 5 | 71% |
| Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 3-րդ կուրս | 7 | 6 | 85% |
| Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 4-րդ կուրս | 4 | 4 | 100% |
| **Տնտեսագիտական** | **18** | **17** | **94%** |
| Ֆինանսներ /ըստ ոլորտի/ 4-րդ կուրս | 8 | 6 | 75% |
| Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ 4-րդ կուրս | 6 | 5 | 83% |
| Տնտեսագիտություն 4-րդ կուրս | 4 | 4 | 100% |
| **Հեռակա ուսուցման** | **77** | **28** | **36%** |
| Իրավագիտություն 5-րդ կուրս | 27 | 5 | 22% |
| Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ 5-րդ կուրս | 18 | 7 | 38% |
| Պատմություն 5-րդ կուրս | 4 | 2 | 50% |
| Սերվիս 5-րդ կուրս | 4 | 2 | 50% |
| Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 5-րդ կուրս | 19 | 11 | 57% |
| Համակարգչային ճարտարագիտություն 5-րդ կուրս | 4 | - | 0% |
| Հայոց լեզու և գրականություն 5-րդ կուրս | 1 | - | 0% |
| **Ընդամենը** | **185** | **95** | **51%** |

Աղյուսակից ակնհայտ է դառնում որ, ըստ ֆակուլտետների պրակտիկայում գտնվող ուսանողների թվաքանակի, հարցմանն առավել ակտիվ մասնակցել են

Տնտեսագիտական, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ուսանողները, առավել պասիվ՝ Հեռակա ուսուցման և Բանասիրական ֆակուլտետների ուսանողները:

**Ըստ պրակտիկայի տեսակի**

**Գծապատկեր 1.**




Գծապատկերից պարզ է դառնում է, որ ընդհանուր հարցվողների 66%-ը նախաավարտական պրակտիկայի մասնակիցներ են, իսկ 20%-ը՝ մանկավարժական պրակտիկայի, 14%-ը (14 ուսանող)՝ արտադրական պրակտիկայի:

Արդյունքում, 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում նախաավարտական պրակտիկայում գտնվող 124 ուսանողից հարցմանը մասնակցել է 63-ը (50%), մանկավարժական պրակտիկայում գտնվող 30 ուսանողներից՝ 19-ը (63%), արտադրական պրակտիկայում գտնվող 31 ուսանողներից՝ 13-ը (41%):

**2. Ո՞ր կազմակերպությունում եք անցկացրել Ձեր պրակտիկան:**

Հարցվողները նշել են հետևյալ կազմակերպությունները.

1. Գեղարքունիքի մարզպետարան,
2. Գավառի համայնքապետարան,
3. Սևանի համայնքապետարան,
4. Գավառի ավագ դպրոց,
5. Գավառի Ավ. Իսահակյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց,
6. Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջինակարգ դպրոց,
7. Գավառի Գ. Մնացականյանի անվան թիվ 7 դպրոց,
8. Սևան քաղաքի թիվ 6 միջնակարգ դպրոց,
9. Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան թիվ 1 հիմնական դպրոց,
10. Երանոսի թիվ 1 միջնակարգ դպրոց,
11. Ծովազարդի միջնակարգ դպրոց,
12. Կարմիրգյուղ գյուղ թիվ 1 միջնակարգ դպրոց,
13. Նորատուսի թիվ 3 միջնակարգ դպրոց,
14. Հայրավանքի միջնակարգ դպրոց,
15. ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան,
16. ՀՀ Գեղարքունիքի մարզի քննչական մարզային վարչություն,
17. ՀՀ Քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սևանի քննչական բաժին,
18. ՀՀ Քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Մարտունի քննչական բաժին,
19. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին,
20. ՀՀ Էրեբունի և Նուբարաշենի քննչական բաժին,
21. ՀՀ Փաստաբանական պալատ,
22. Դատական ակտերի հարկադիր կատարման մարմին,
23. «Ակբա Բանկ» Գավառ մ/ճ,
24. «ՎՏԲ բանկ» Գավառ մ/ճ,
25. «Հայբզնեսբանկ» Սևան մ/ճ,
26. Գավառի ԲԿ,
27. Մարտունու ԲԿ,
28. «Ծաղկունք» հյուրատուն,
29. «Նոյ լենդ» ժամանցի կենտրոն,
30. Ինտերնետ կոմունիկացիոն կենտրոն,
31. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,
32. (ՄԱՇԽ) ՍՊԸ,
33. «Արա-Արեգ» ՍՊԸ,
34. Ինտերնետ կոմունիկացիոն ցանցեր,

35. »SoftConstruct»,
36. «Գավառի ՀՀԳ» ՍՊԸ,
37. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ,
38. Աստղաձոր գյուղի միջնակարգ դպրոց,
39. «Ակբա Բանկ» ԲԲԸ,
40. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ,
41. Գավառի ՀՀԳ ՍՊԸ,
42. ՀՀ ՊԵԿ,
43. «Հայբիզնեսբանկ» Գավառ մ/ճ ,
44. ՊԵԿ ՀՎՍՎ 10-րդ բաժին:

**3. Նշել կազմակերպության իրավական ձևը.**

**Գծապատկեր 2.**




Հարցվողների 80%-ը նշել է պետական կազմակերպություններ՝ հանրակրթական դպրոց, տեղական ինքնակառավարման մարմիններ, քննչական մարմիններ, բժշկական կենտրոններ և այլն: 20%-ը նշել է մարզային բանկային մասնաճյուղերը, համացանցային սպասարկման կենտրոններն ու հյուրատները:

# 4. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

## *4.1. Պրակտիկայի նպատակը հստակ էր ինձ համար:*

***Գնահատումն իրականացվել է 1-5 միավորանոց համակարգով, որտեղ 5-ը բավարարվածության ամենաբարձր աստիճանն է, 1-ը՝ ամենացածր:***

**Գծապատկեր 3.**




Հարցվողների 82,1%-ը՝ 80 ուսանող, նշել է, որ պրակտիկայի նպատակը հստակ էր իրենց համար, ինչը պայմանավորված է պրակտիկայի համապատասխան վայրի ընտրությամբ, 12,6%-ը՝ 12 ուսանող, հարցին տվել է 4 միավոր: 1,2,3 միավորներ նշվել է 1 կամ 2 ուսանողի կողմից, ովքեր պրակտիկայի ընթացքում հավանաբար ցուցաբերել են պասիվություն:

Ցածր միավորներ հիմնականում նշվել են Հեռակա ուսուցման ֆակուլտետի իրավագիտություն և տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժինների ուսանողների կողմից:

## **4.2.. Պրակտիկան օգտակար էր տեսական գիտելիքները կատարելագործելու առումով:**

**Գծապատկեր 4.**




Հարցվողների 79,8%-ը՝ 78 ուսանող, նշել է, որ պրակտիկան օգտակար էր տեսական գիտելիքները կատարելագործելու առումով, 14,9%-ը՝ 13 ուսանող, հարցին տվել է 4 միավոր, այսինքն՝ պրակտիկան տեսական գիտելիքների կատարելագործման առումով ոչ ամբողջությամբ է բավարարել, 1, 2, 3 միավոր հատուկենտ նշվել են առկա ուսուցման Սերվիս բաժնի ուսանողների կողմից:

**4.3. Պրակտիկան օգտակար էր գործնական կարողությունների և հմտությունների զարգացման առումով:**

**Գծապատկեր 5.**



Հարցվողների 78,7%-ը՝ 77 ուսանող, նշել է, որ պրակտիկան օգտակար էր գործնական կարողությունների և հմտությունների զարգացման տեսանկյունից, 14,9%-ը՝ հարցին տվել է 4 միավոր, այսինքն՝ պրակտիկան գործնական հմտություններով ոչ ամբողջությամբ է բավարարել, 1, 2, 3 միավոր հատուկենտ նշվել է առկա ուսուցման Սերվիս և Անգլերեն լեզու և գրականություն բաժնի ուսանողների կողմից:

**4.4. Պրակտիկան պատշաճ էր կազմակերպված:**

**Գծապատկեր 6.**




Հարցվողների 78,9%-ը՝ 77 ուսանող, նշել է, որ պրակտիկան պատշաճ էր կազմակերպված, 14,7%-ը՝ 14 ուսանող, հարցին տվել են 4 միավոր, որը հիմնականում նշվել է Հայոց լեզու և գրականություն, Անգլերեն լեզու և գրականություն բաժնի ուսանողների կողմից: 1, 2, 3 միավոր կրկին նշվել է Սերվիս բաժնի ուսանողների կողմից:

**4.5. Պրակտիկայի տևողությունը բավարար էր առաջադրված նպատակներին հասնելու համար:**

**Գծապատկեր 7.**




Հարցվողների 56,8%-ը՝ 55 ուսանող, նշել է, որ պրակտիկայի տևողությունը գերազանց էր, 28,4%-ը՝ 27 ուսանող, հարցին տվել են 4 միավոր, որը հիմնականում նշվել է Հայոց լեզու և գրականություն, Անգլերեն լեզու և գրականություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի ուսանողների կողմից, ինչը պայմանավորված է ուսանողների ավարտական աշխատանքի հետազոտական մասը գրելու խնդիրների հետ, քանի որ պրակտիկայի ընտրված ժամանակահատվածը չի համապատասխանում հանրակրթական դպրոցում ակտիվ դասերի անցկացման ժամանակահատվածի հետ: 1, 2, 3 միավոր կրկին նշվել է Սերվիս բաժնի ուսանողների կողմից:

**4.6. Որքանո՞վ էր արդյունավետ պրակտիկան:**

**Գծապատկեր 8.**



Հարցվողների 76,8%-ը՝ 75 ուսանող, նշել են, որ պրակտիկան արդյունավետ էր կազմակերպված, 16,8%-ը՝ 16 ուսանող, հարցին տվել են 4 միավոր, որը հիմնականում նշվել է առկա ուսուցման Հայոց լեզու և գրականություն, Համակարգչային ճարտարագիտություն, Ֆինանսներ /ըստ ոլորտի/, և հեռակա ուսուցման Իրավագիտություն բաժնի ուսանողների կողմից: 1, 2, 3 միավոր կրկին նշվել է Սերվիս բաժնի ուսանողների կողմից:

**4.7.Պրակտիկայի անցկացման ընթացքը վերահսկվում էր ամբիոնի կողմից:**

**Գծապատկեր 9.**




Հարցվողների 83,2%-ը՝ 82 ուսանող, նշել է, որ պրակտիկայի անցկացման ընթացքը վերահսկվում էր ամբիոնի կողմից, 8,4%-ը՝ 8 ուսանող, հարցին տվել են 4 միավոր, որը հիմնականում նշվել է առկա ուսուցման Ֆինանսներ /ըստ ոլորտի/, Համակարգչային ճարտարագիտություն, Անգլերեն լեզու և գրականություն և հեռակա ուսուցման Իրավագիտություն բաժնի ուսանողների կողմից: 1, 2, 3 միավորներ նշվել են հեռակա ուսուցման Իրավագիտություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի ուսանողների կողմից:

**4.8.Գործատուները լուրջ էին վերաբերում պրակտիկայի կազմակերպման գործընթացին:**

**Գծապատկեր 10.**




Հարցվողների 72,6%-ը՝ 70 ուսանող, նշել է, որ գործատուները լուրջ էին վերաբերում պրակտիկայի կազմակերպման գործընթացին: 21,1%-ը՝ 20 ուսանող, հարցին տվել են 4 միավոր, որը հիմնականում նշվել է առկա ուսուցման Համակարգչային ճարտարագիտություն, Սերվիս, Անգլերեն լեզու և գրականություն և հեռակա ուսուցման Պատմություն բաժնի ուսանողների կողմից: 1, 2, 3 միավորներ նշվել են հեռակա ուսուցման Իրավագիտություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի ուսանողների կողմից:

**2. Խնդրում ենք ներկայացրեք Ձեր առաջարկությունները, նկատառումները, պրակտիկայի կազմակերպման և անցկացման գործընթացը բարելավելու համար:**

**Հարցին ի պատասխան հարցվողները նշել են.**

1. Ավելի երկար ժամանակ տրամադրել պրակտիկային:
2. Խնդրում եմ պրակտիկաների անցկացման համար տրամադրել տրանսպորտային միջոց:
3. Առաջարկում եմ չորրորդ կուրսի երկրորդ կիսամյակը լիովին տրամադրել

պրակտիկային:

4. Երկարացնել ժամանակահատվածը:
5. Միայն հանրակրթական դպրոցներում պրակտիկա անցկացնելն ուսանողի համար հետաքրքիր չէ:
6. Ձանձրալի է միշտ նույն տեղերում պրակտիկա անցկացնել, այն էլ մանկավարժական բնույթի:
7. Կցանկանայի հաճախակի մասնագիտական պրակտիկաներ անցկացնել:
8. Առաջարկում եմ պրակտիկանտների համար ստեղծել բանկային ծրագիր, որպեսզի ուսանողը կարողանա աշխատել հաճախորդների հետ և օրվա վերջում աշխատանքը վերանայել ղեկավարի հետ:
9. Հստակ սահմանել ուսանողի և ղեկավարի պարտականությունները:
10. Պրակտիկայի համար սահմանել ավել մեծ ժամանակահատված, օրինակ՝ 6 ամիս:
11. Առաջարկում եմ պրակտիկան կազմակերպել այն ժամանակ, որ դրա ավարտից հետո դասերն ու միջանկյալ քննությունները միանգամից չկուտակվեն և չառաջացնեն ծանրաբեռնվածություն:
12. Տրամադրել տրանսպորտ անհրաժեշտ երթուղիներն իրականացնելու և համապատասխան կազմակերպություններ այցելելու համար (Սերվիս):
13. Խնդրում ենք պրակտիկան իրականացնել ըստ սահմանված ու նախատեսված կարգի և ավելի շատ ուշադրություն հրավիրել սպասարկման ձեռնարկությունների վրա:
14. Ցանկալի կլիներ պրակտիկայի տևողությունը դառնար չորս ամիս:
15. Կապ պահպանել դպրոցի հետ:
16. Պրակտիկան անցկացնել բոլոր կիսամյակներում՝ նախատեսված ժամանակահատվածը բաժանելով երկու մասի:
17. Պրակտիկան կազմակերպել ավելի շուտ, քանի որ ակտիվ պրակտիկայի շրջանում դպրոցական ծրագրում շատ քիչ թեմաներ են մնում, համընկնում է դպրոցական թեմատիկ գրավորների ընթացքի հետ: Ուստի ավելի լավ կլինի պրակտիկան մեկ ամիս շուտ սկսել:

## IV. Եզրակացություններ, առաջարկություններ

Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք նշել, որ հարցմանը մասնակից ուսանողների մեծ մասը գոհ է մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման ընթացքից: Հարցվողների մեծ մասը պրակտիկան անցկացրել է պետական կառույցներում՝ հիմնաանում հանրակրթական դպրոցներում և ոստիկական համակարգում, քննչական մարմիններում:

Պրակտիկայի կազմակերպման ընթացքը գնահատող հարցաթերթի ութ հարցերի պատասխանների արդյունքներն ամփոփելով, կարող ենք նշել, որ բացասական պատասխաններ, անբավարար միավոր նշվել են Բնագիտական ֆակուլտետի Սերվիս բաժնի ուսանողների կողմից, ովքեր առաջարկում են արտադրական պրակտիկան կազմակերպելիս հաշվի առնել ուսանողների կարծիքները՝ հնարավորության դեպքում ներառել նաև ուսանողների կողմից ներկայացված երթուղիները:

Գավառի պետական համալսարանում մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման գործընթացի արդյունավետության գնահատման համար կարևոր են նաև բաց հարցերը, որտեղ որպես առաջնահերթություններ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Անգլերեն լեզու և գրականություն, Հայոց լեզու և գրականություն բաժինների համար առաջարկվում է պրակտիկան կա՛մ սկսել առաջին կիսամյակում, կա՛մ նախատեսված ժամանակահատվածը բաժանել երկու կիսամյակների միջև: Հարցվողներն առաջարկում են նաև պրակտիկան կազմակերպել այն ժամանակ, որ դրա ավարտից հետո դասերն ու միջանկյալ քննությունները չկուտակվեն և չառաջացնեն ծանրաբեռնվածություն, ինչպես նաև հստակ սահմանել ուսանողի և ղեկավարի պարտականությունները:

ԳՊՀ որակի ապահովման բաժինը, ամփոփելով հարցման արդյունքները, առաջարկում է 2023-2024 ուսումնական տարվա մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման ընթացքում հաշվի առնել հարցման արդյուքները և ուսանողների առաջարկություններն ու նկատառումները:

Մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների կազմակերպման ընթացքից և արդյունավետությունից Գավառի պետական

համալսարանի ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծությունը, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են ԳՊՀ բոլոր ստորաբաժանումներին, որպեսզի ուսումնասիրվեն, ներկայացվեն համապատասխան լուծումներ ու առաջարկություններ, արդյունքում ձեռնարկվեն միջոցներ՝ ԳՊՀ հիմնական շահառուների՝ ուսանողների, բավարարվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ: